

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02**

Լեւոնտոյնի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 16-ի նիստի.

գ. Լեւոնտոյն

Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

**Մասնակցում էին՝**

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Իվան Բոլոտին, Քրիստինե Խառատյանը, Վասիլի Կորոյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

**ՆԻՍՏԸ** - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

**Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:**

**Կողմ՝ 4, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:**

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.**

**Հաստատված օրակարգը /N16/՝**

1. Լոռու մարզի Լեւոնտոյնի համայնքի հողային ֆոնդի մասին

զեկ. Ա.Գալուստյան

2. Լեւոնտոյնի համայնքի Անտառաշեն բնակավայրի տարածքում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

զեկ. Ա.Գալուստյան

3. Լոռու մարզի Լեւոնտոյնի համայնքի 2024 թ-ի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին

զեկ. Մ.Բոլոտինա

**ԸՆԹԱՑՔԸ՝**

1. **ԼՍԵՑԻՆ** - Լոռու մարզի Լեւոնտոյնի համայնքի հողային ֆոնդի մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը Նա ներկայացրեց համայնքի հողային հաշվեկշիռը՝ անցած տարվա համեմատ փոփոխություն չի եղել:

**Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N17/**

2. **ԼՍԵՑԻՆ** - Լերմոնտովո համայնքի Անտառաշեն բնակավայրի տարածքում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց 1.22724հա հողամասը /բնակավայրի հողեր/, որը առաջարկվում է փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության: Ավագանու անդամները տվեցին իրենք համաձայնությունը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N18/**

3. **ԼՍԵՑԻՆ** - Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց իր հաշվետվությունը 2024 թ-ի առաջին կիսամյակի կատարած աշխատանքների վերաբերյալ, ինչը ավագանու անդամները ընդունեցին ի գիտություն:

**Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N19/**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1. ԱՍԱԴԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2. ԲՈՂՈՏԻՆ ԻՎԱՆ

3. ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

4. ԿՈՐՈՂՅՈՎ ՎԱՍԻԼԻ